

(817) այր մի յազգէն Պարսից, Բար անուն, ելեալ ի Բաղտատայ, արկանէր ըլրազումս ի սուր սուսերի յազգէն Իսմայելի, զբազումս զերեւոյթ. և և ասէր զինքն անմահ. և ի միում նուազի սատակէր երեսուն հազար ի պատերազմեն իւրում ընդ Իսմայելի: Եւ եկն մինչեւ ցՔեղարքունի, և մաչէր սրով զմեծ և զփոքը: ... Մեռաւ Մամուն. և և առ զիշխանութիւնն Արուսահակ եղբայր նորա. և նա առաքէ զԱբշինն ամենայն ուժով իւրով ի վերայ Բարանայ: Եւ Աբշինն առաքէ ի Հայս, և ինքն կոտորէ զՉորան Բարանայ: Եւ Սահլ որդի Սմբատայ ըմբռնէ զԲարան, և առնու յԱբշինն պարզեաւ հազարիցս հազար կշիռ արծաթոյ, և այլ ևս հարիւր հազար առնու ի նմանէ, և զԲարանայ կըտրեալ զձեռս և զոտս՝ հանեն զնա ի փայտ» (Ս. Ղազար, 1862, էջ 79):

Վարդանի մօտ այսպէս շատ համառօտ է վկայութիւնը և ինքնին քննելի:

Բարակ Սուրամայդ ազանդաւորներուն զլուին էր: Խուռամի՝ Պարսկաստանի մէկ շրջանն էր, ուր այս ազանդը ծնունդ առաւ, ըստ երեւոյթի ապու-Մուսլիմ ալ-Խուրասանիի մահուան դատապարտուելէն վերջ: Ազանդաւորներէն ոմանք կը մերժէին որ ապու-Մուսլիմ մեռած էր և նոյն իսկ անոր յարութիւն առնելը կը դուշակէին: Կ'ըսէին որ ապու-Մուսլիմ պիտի վերադառնար աշխարհի վրայ արդարութիւն տարածելու համար⁽¹⁾:

Այս ազանդին հետեւող մըն էր Բարակ՝ Վարդանի Բար՝ կոչածը, որ սակայն Պաղտատան չէր որ մէջտեղ ելաւ, ինչպէս որ Վարդան կը կարծէ: Բարակ ինքզինքը անմահ կը հռչակէր, ինչպէս որ Վարդան կը յիշէ: Միքայէլ Ասորի այս Բարակը կ'անուանէ Մախադի, ըսելով. «Եւ յայսմ ժամանակի (828ին) երեւցաւ ոմն Մահազի անուն»⁽²⁾:

Միքայէլ Ասորի կը վկայէ, որ « Եւ ի

հին ժամանակացն կայր ի մէջ Քուրտանացն բան ինչ զիւթական, և թէ յայտնելոց է այր մի Մահազի անուն, և և տիրէ ամենայն երկրի, և որ հաւատայ ի նա և մեռանի՝ յնա քառասուն աւուր յառնէ, և ժամանակ ինչ կեցեալ՝ փոխի յանմահական աշխարհն»⁽³⁾: Որոչ է որ ասիկա նրկատի ունենալով է որ Վարդան՝ Բարակի մասին անմահութիւն կը վերագրէր՝ ըստ ազանդաւորին տարածայնութեան:

Բարակ իրապէս 817ին մէջտեղ ելաւ և ազանդաւորներուն զլուխը անցաւ: Միքայէլ Ասորիի տուած 828ը անտարակոյս պէտք է նկատել 818, երբ Բարակ սկսաւ հետզհետէ իր շահատակութիւնները տարածել: Միքայէլ Ասորի կը գրէ.

« Ազանդաւորներէն ոմանք ասէին՝ թէ Աստուած է, և այլք՝ թէ Թաղաւոր է, և սպասէին նմա: (Այսինքն Մահազիի, աւելի ճիշտ, Ապու-Մուսլիմ ալ-Խուրասանիի մահուանէ վերջ՝ անոր յարութեան: Յ. Ք.): Եւ յայսմ ժամանակի երեւցաւ ոմն Մահազի (Բարակ) անուն, և կարծեցին թէ նա է, և ինքն հաւատաց թէ ինքն է, և սկսան ժողովիլ առ նա, և նա թագ եղ և ձգէր քող երեսացն. և ել համբաւ զնմանէ, և զարհուրեցաւ Մամուն ի նմանէ: Եւ զնաց Մահազի և արար զընակութիւն իւր ի լերինս Արարազայ, յաշխարհն Հայոց և երթայր յամենայն կողմանս և զամենայն ազգ միապէս կոտորէր. և եկն ի ձգիրոյ սահմանն, և հարկանէր և աւերէր առ հասարակ: Եւ լուեալ Հասան զօրսպետն Մամունայ, և պնդեալ զինքն՝ խաղաց զնաց ի վերայ նորա և սկսաւ կոտորել: Եւ փախան ի նրմանէ (Բարակէն) րազմութիւն ամբոխին: Եւ ինքն Մահազի ընկեցեալ զթագն և ըլքողն՝ փախչէր, և անկաւ յերկիրն Հայկազոյն Սահակայ, և Տաճիկք առին ըզբանակն նորա և զարձան. և Սահակ իշխանն Հայկազոյն ըմբռնեաց զՄահազի և

(1) History of the Arabs. Prof. Philip K. Hitti: London, 1946, էջ 323:

(2) Երուսաղէմ, 1871, էջ 364:

(3) Անդ: